

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԿԱ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

27.03.2019

Միրելի՛ թատերական գործիչներ

Շնորհավորում եմ բոլորիդ այսօր՝ մարտի 27-
իննշվող ձեր մասնագիտական տոնիկապակցությամբ:

Թատրոնի համաշխարհային օրը տոն է նաեւ թատերասերների համար, ուստի շնորհավորում եմ ինչպես թատրոնով ապրող, թատրոնում ստեղծագործող եւ աշխատող բոլոր անհատներին, այնպես էլ՝ ձեր հանդիսատեսին:

Միրելի՛ դերասաններ, բեմադրիչներ, թատրոնի ստեղծագործական կազմի անդամներ, թատերագիրներ, անգնահատելի է ձեր դերը ամենահինարվեստներից մեկին՝ թատրոնին մեզ հաղորդակից դարձնելու եւ նաեւ նորսերունդների մեջ գեղագիտական բարձր ճաշակ ձեւավորելու գործում:

Առանձնահատուկ ջերմությամբ շնորհավորում եմ Սյունիքի մարզում գործող երկու պետական՝ Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան դրամատիկական եւ Գորիսի Վ.Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնների ստեղծագործական կազմերին, նաեւ «Տիկնիկ» մանկական տիկնիկային թատրոնին. դուք, հիրավի, մեծարժեք ու կարելուր գործ եք կատարում՝ մայրաքաղաքից այսքան հեռու արթուն պահելով թատերական կյանքը, յուրահատուկ շունչ հաղորդելով մեր մարզի մշակույթին՝ չվհատվելով առկա դժվարություններից:

Բոլորիդ մաղթում եմ մշտապես թարմացվող խաղացանկ, ունեցած խնդիրների հնարավորինս արագ լուծում, բեղուն ու ակտիվ ստեղծագործական աշխատանք, հանդիսատեսի ծափերից թնդացող դահլիճներ...